

Կարևոր տեղեկատվություն բնակարանաշինության և քաղաքաշինության վարչության (HUD)



2020-ի նոյեմբեր

Այս թռուցիկը մշակվել է ԱՄՆ-ի Բնակարանաշինության և քաղաքաշինության վարչության (HUD) հանրային և հնդկական բնակարանաշինության գրասենյակի (PIH) կողմից՝ օգնելու ձեզ հասկանալ, թե ինչ է նշանակում CDC-ի հրամանը HUD-ի կողմից աջակցվող վարձակալների համար, որոնք վարձակալներ են հետևյալ PIH ծրագրերում. Բնակարանային ընտրության վաուչեր (HCV) ծրագիր, հանրային բնակարանաշինության ծրագիր և Բաժին 8-ի չափավոր վերականգնման (Mod Rehab) ծրագիր: Եթե դուք PIH ծրագրում վարձակալ եք, այս թռուցիկի կամ CDC-ի հրամանի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր տանտիրոջը կամ հանրային բնակարանաշինության գործակալությանը (PHA): Կարող եք այցելել նաև

CDC-ի կայքը՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/covid-eviction-declaration.html>.

Ի՞նչ է վտարման կասեցումը CDC-ի կողմից:

- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը (CDC) հրաման է արձակել ժամանակավորապես դադարեցնել բնակելի շենքերից վտարումը՝ կանխելու COVID-19-ի հետագա տարածումը: Վարձակալների համար, որոնք բավարարում են համապատասխան պայմանները, սույն հրամանը ժամանակավորապես դադարեցնում է վտարումները՝ վարձավճարը չվճարելու համար՝ 2020 թ. սեպտեմբերի 4-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը:

Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ վարձավճարը չվճարելու դեպքում վտարելուց պաշտպանված լինելու համար:

- **Քայլ 1.** Եթե ձեր տանտիրոջը կամ PHA-ի մոտ գտնվում եք չվճարման կարգավիճակում, և ձեզ կարող են վտարել 2020 թ. սեպտեմբերի 4-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, ապա պետք է համապատասխանել CDC-ի Հոչակագրում նշված բոլոր յոթ վկայագրերին, որոնք առկա են այստեղ.
 - **Անգլերեն տարբերակ.** <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/downloads/declaration-form.pdf>
 - **Թարգմանված տարբերակներ.**
https://www.hud.gov/program_offices/public_indian_housing/covid_19_resources/resident_declaration_for_m-other_languages
- **Քայլ 2.** Եթե CDC-ի Հոչակագրի բոլոր յոթ վկայագրերին համապատասխանում եք, ապա պետք է ստորագրեք Հոչակագիրը և դնեք ամսաթիվը:
- **Քայլ 3.** Ձեր PHA-ին կամ տանտիրոջը տրամադրեք Հոչակագրի պատճենը՝ ստորագրությամբ և ամսաթվով:

Քայլ 1. Դուք պետք է նախ համապատասխանեք CDC-ի Հոչակագրում նշված բոլոր յոթ վկայագրերին: Դրանք են.

1. Դուք չեք կարող վճարել ձեր ամբողջ վարձավճարը տան եկամտի նվազման կամ արտահերթ բժշկական ծախսերի պատճառով:
 - **Հուշում:** Հանրային բնակարանաշինության մասնակիցների և վաուչերի ծրագրի մասնակիցների համար ձեր վարձավճարը միշտ ճշգրտվում է՝ եկամտի նվազումը արտացոլելու դեպքում, եթե եկամտի փոփոխության մասին հաղորդեք ձեր PHA-ին: Խնդրում ենք հնարավորինս շուտ կապ հաստատել ձեր PHA-ի հետ՝ ձեր ընթացիկ եկամուտը վերանայելու և ձեր վարձավճարը հարմարեցնելու համար՝ փոփոխությունն արտացոլելու նպատակով:
2. Դուք ամեն ինչ անում եք ժամանակին մասնակի վճարումներ կատարելու համար, որոնք նույնքան մոտ կլինեն ամբողջ վճարմանը, որքան թույլ են տալիս հանգամանքները:
3. Դուք ձեր առավելագույն ջանքերն եք գործադրել՝ ողջ մատչելի պետական օգնությունը ստանալու համար:
 - **Հուշում:** Կարող եք հաշվի առնել վարձավճարների աջակցության ծրագրին ձեր ներկա մասնակցությունը՝ որոշելու, թե արդյո՞ք ամեն ինչ արել եք պետական օգնություն ստանալու համար: Հանրային բնակարանաշինության մասնակիցները և վաուչերի ծրագրի մասնակիցները կարող են նաև հաշվի առնել, թե արդյո՞ք նրանք խնդրել են PHA-ին վերանայել իրենց ընթացիկ եկամուտը և ուղղել իրենց վարձավճարը՝ եկամտի փոփոխությունն արտացոլելու համար:
4. Դուք բավարարում եք հետևյալ պայմաններից որևէ մեկը. (1) դուք ակնկալում եք, որ 2020-ին վաստակելու եք \$ 99 000-ից պակաս (կամ \$ 198 000 համատեղ դիմելու դեպքում), կամ (2) ձեզանից պահանջված չէր որևէ եկամուտ հաղորդել IRS-ին, կամ (3) ստացել եք CARES օրենքի խթանիչ չեկ:

- Յուշում: 1200 ԱՄՆ դոլարը + խթանիչ վճարը ՉԻ ներառվել ձեր եկամտի հաշվարկման մեջ: Եթե խթանիչ վճար չեք ստացել, այցելեք այս կայք՝ ձեր վճարի կարգավիճակը ստուգելու և պարզ ձևաթերթիկը լրացնելու համար.
<https://www.irs.gov/coronavirus/get-my-payment>

5. Եթե ձեզ վտարելիս, դուք, ամենայն հավանականությամբ, կդառնալիք անօթևան, կամ կտեղափոխվեիք անօթևանների ապաստարան կամ կտեղափոխվեիք նոր բնակարաններ, որոնք կիսում են այլ բնակավայրերում ապրող մարդիկ:
6. Դուք հասկանում եք, որ դուք պատասխանատու եք չվճարված վարձավճարը վճարելու համար, ձեզանից կարող են գանձվել չվճարված վարձավճարների դիմաց վճարներ, և դուք պետք է շարունակեք պահպանել ձեր վարձակալության պայմանները:
7. Դուք հասկանում եք, որ երբ CDC-ի օրենքի ժամկետը լրանա՝ 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ին, դուք կարող եք ենթակա լինել վտարման, եթե ունեք չվճարված վարձավճար կամ չվճարված վճարներ:

Քայլ 2. Եթե դուք համապատասխանում եք Քայլ 1-ի բոլոր յոթ վկայագրերի չափանիշներին, ստորագրեք և դրեք ամսաթիվը Յոշակագրում:

- Յուրաքանչյուր չափահաս անձ, որը նշված է վարձակալական, վարձակալության պայմանագրի կամ բնակարանային պայմանագրի վրա, որը համապատասխանում է Քայլ 1-ում նշված պայմաններին, պետք է ստորագրի Յոշակագիրը: Որոշակի հանգամանքներում, օրինակ, երբ անհատները հայտարարագրում են համատեղ հարկեր, ընտանիքի մեկ անդամի համար կարող է խորհուրդ տրվել վարձակալական, վարձակալության կամ բնակարանային պայմանագրի ներքո լրացված հայտարարագիր ներկայացնել այլ չափահաս բնակիչների անունից: Կարող եք օգտագործել CDC-ի Յոշակագիրը, որը հասանելի է այստեղ՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/downloads/declaration-form.pdf>.

Քայլ 3. Յոշակագրի ստորագրված պատճենը տրամադրեք ձեր տանտիրոջը կամ PHA-ին:

- **Կարևոր է:** Եթե Դուք չեք ստորագրում և չեք ներկայացնում Յոշակագիրը ձեր տանտիրոջը կամ PHA-ին, ապա ձեզ կարող են վտարել վարձավճարը չվճարելու համար՝ 2020 թ.-ի սեպտեմբերի 4-ից մինչև 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ը: Այնուամենայնիվ, Յոշակագիրը պահանջում է, որ դուք հաստատեք ճշմարտացի տեղեկատվություն՝ ստախոսության պատժի տակ: Սա նշանակում է, որ ցանկացած կեղծ կամ ապակողմնորոշիչ հայտարարություններ կամ բացթողումներ կարող են հանգեցնել քրեական և քաղաքացիական պատժամիջոցների՝ տուգանքների, տույժերի, վնասների կամ ազատազրկման, այնպես որ **խնդրում ենք Յոշակագիրը ստորագրելուց առաջ համոզվել, որ համապատասխանում եք Քայլ 1-ի վկայագրերի բոլոր չափանիշներին:**
- Եթե վարձավճարը չվճարելու համար վտարումն սկսվել է մինչև սեպտեմբերի 4-ը, բայց դեռ չի ավարտվել, դուք դեռ կարող եք ստորագրել և Յոշակագիրը ներկայացնել ձեր տանտիրոջը կամ PHA-ին՝ վտարումից պաշտպանված լինելու համար:
- Հնարավորության դեպքում ուղարկեք Յոշակագիրը Էլ. փոստով կամ անդորրագիր տրամադրող այլ եղանակով, որպեսզի ուղարկման փաստը գրանցվի: Օրինակ, մեկ այլ եղանակ կարող է լինել հավաստագրված փոստով Միացյալ Նահանգների փոստային ծառայության միջոցով՝ առաքման պահանջվող անդորրագրով: Ձեր գրառումների համար պահեք նաև ձեր ստորագրած Յոշակագիր(ներ)ի պատճենը՝ ներառյալ ամսաթիվը և ժամանակը, երբ այն ուղարկվել կամ առաքվել է ձեր տանտիրոջը կամ PHA-ին:
- Վառույթը ծրագրի մասնակիցները կարող են նաև ցանկանալ Յոշակագիր տրամադրել ձեր PHA-ին, ինչպես նաև ձեր տանտիրոջը:

¹ Ընդունված է «Օգնության, օժանդակության և տնտեսական անվտանգության մասին» օրենքի 4024 բաժնի՝ համաձայն 2020 թ. «CARES օրենքի» (Հանրային օրենք 116-136):

Խնդրում ենք հիշել.

- Եթե դուք ի վիճակի եք վճարել ձեր վարձավճարը կամ մասամբ վճարել վարձավճարը, ապա պետք այն կատարեք:
- CDC-ի հրամանում վտարումների կասեցումը տարբերվում է CARES-ի օրենքում նշված վտարման կասեցումից ¹: CARES-ի օրենքում վտարումների կասեցման ժամկետը լրացել է 2020 թ.-ի հուլիսի 24-ին: Երկուսի ամենամեծ տարբերությունն այն է, որ CDC-ի հրամանի համաձայն. (1) վարձակալներից պահանջվում է բոլոր յոթ վկայագրերով հռչակագիր ստորագրել՝ վարձավճարը չվճարելու դեպքում վտարելուց պաշտպանված լինելու համար, և (2) վարձակալները կարող են գանձվել չվճարված վարձավճարի պատճառով ուշ վճարների, տույժերի և այլ վճարների համար:
- Այլ պաշտպանություններ կարող են ձեզ համար մատչելի լինել, եթե ձեր նահանգային, տեղական կամ տարածքային իշխանությունները ավելի երկար կամ խստորեն կասեցնեն վտարումները, որոնք ապահովում են նույն կամ ավելի բարձր մակարդակի առողջապահական պաշտպանություն, քան CDC-ի հրամանում նշված պահանջները:
- Ձեզանից դեռ պահանջվում է պահպանել վարձակալության մյուս բոլոր պայմանները և ձեր բնակության վայրի կանոնները: Վարձակալները դեռ կարող են վտարվել հանցավոր արարքների, այլ գործողությունների կամ վարձակալության խախտումների համար:

Խորհուրդներ ձեր տանտիրոջ կամ PHA-ի հետ հաղորդակցվելու վերաբերյալ.

Եթե դուք դժվարանում եք վարձավճար վճարել կամ այլևս չեք կարող վճարել, անմիջապես դիմեք ձեր տանտիրոջը՝ քննարկելու ձեր ընտրանքները: Սթրեսային ֆինանսական ժամանակաշրջանում ձեր տանտերը կարող է նաև խնդիրներ ունենալ: Փորձեք հստակ ու հանգիստ շփվել նրանց հետ: Ահա որոշ խորհուրդներ, որոնք կօգնեն ձեզ տան տիրոջ հետ զրոյցի ընթացքում.

- Անկեղծ եղեք ձեր իրավիճակի վերաբերյալ: Եթե դուք վարակվել եք COVID-19-ով կամ ունեք այլ խնդիրներ, խնդրում ենք պատմեք, թե ինչպես է դա ազդել ձեր եկամտի վրա: Հանրային բնակարանաշինության մասնակիցները և վաուչեր ծրագրի մասնակիցները պետք է հնարավորինս շուտ կապվեն ձեր PHA-ի հետ՝ ձեր ընթացիկ եկամուտը վերանայելու և վարձավճարը կարգավորելու համար:
- Նշեք ձեր գտած ցանկացած ռեսուրս և օգնության ընտրանքները:
- Բացատրեք, թե ինչպես ձեր ընտանիքի վրա կանդրադառնա բնակարանի կորուստը:
- Հարցրեք վճարման պայմանների մասին:
- Պահեք ցանկացած էլ. փոստի և տեքստային խոսակցություններ, ինչպես նաև նշումներ կատարեք, երբ խոսում եք հեռախոսով կամ անձամբ:

¹ Ընդունված է «Օգնության, օժանդակության և տնտեսական անվտանգության մասին» օրենքի 4024 բաժնի՝ համաձայն 2020 թ. «CARES օրենքի» (Հանրային օրենք 116-136):